


թարգմանոցիս, երկրորդ՝ իբրև հեղինակոցիս:

Ա. Իբրև թարգմանութիւն յիւրաքանչիւր է, որ թարգմանիչն այսպիսի սեղմ ոճով գրուածոյ մը իւրաքանչիւր իմաստները լաւ ըմբռնելու է, սակայն կաշկանդաւած թարգմանութիւն մ'ըլլալով նիւթին գոտարութիւնը կրկնապատկեր է, մինչդեռ այսպիսի քաջ գերմանացիք մը կրնար և հարկ չլ'որ ազատ թարգմանել, տեսերին լուրջ և գոտարին իմաստները զիւրըմբռնելի ընկելու համար: — Ինքն իսկ թարգմանիչը կը խոստովանի՝ թէ «Օտարաբանութիւններ շատ կան», և կը յաւելու. «Անխուսափելի չարիք»: Մեզի կ'ենդէ թէ այս մասը՝ թարգմանութեան ամէն կէտերուն մէջ արգարանալի չէ, զոր քերականներու թողլով, տեսնենք այս տեսորը:

Բ. Իբրև հեղինակութիւն, զոր Վ. Զօմբարտ նախ խօսեր է ճատօրէն, ապա կարգաւորելով հրատարակել է: Նա՝ իւր յառաջբառնին մէջ կը գրէ. «Մի սեղմ, խիստ գծաւ գրուած և ամբողջական համաշայտացք է սօցիոլոգիայի և սօցիալական շարժման 19րդ դարու»: — Տեսարու ըստ նիւթին և հեղինակութեան քննադատուելու համար ստուար մատենի մը կարօտ է. բայց մենք անձուկ տեղւոյն մէջ դիտել կու տանք միայն, որ այդ տեսարն, ինչպէս կը ցուցնեն բացայայտ վերոյիշեալ տողերն, արդի դարուս գոտարակնին խնդրոյ մը պատմական պատկերն է, յորում ի մէջ կը բերուին ընկերվարական բաղձալի գրութիւններ, հռչակաւոր անձանք խորիմաստ գիւտեր՝ ընկերական ազնւոցը գոնէ մեկմեկու համար: Հեղինակն կը թուէ մարդկութեան թշուառութիւնները՝ որք յայտն կրնան ամփոփուիլ. Ուսանք ի զրկանս կը մշտնի, այլք՝ ի գրգանս կը յոփանան: Սակայն ոչ կարելի Մաքս և ոչ իրեն նմանիք կրնան այսպիսի հակադրութեան մը զարման ընել. և եթէ ըլլայ հնարաւոր սպեղանի մը այսքան վերաց մարդկութեան՝ անշուշտ դարուս ամենէն գերազանց գիւտն պիտի ըլլայ: Ուստի հեղինակին այդ համահայտացքը թողլով իւր առակ պատմական վիճակին մէջ, որոյ վարկը քննել տեղոյ չի ներք, Շէլլերին տողերէն աւելի, որովք նա կը կնքէ իւր

ճառախօսութիւնները, ազդոյ կը տեսնենք վերջիլիսին համառօտը, *Labor improbus vincit otium*. յիշեցնելով՝ որ կեանքը պայքար մ'է, և յաղթութիւնը մերթ ոմանց է և մերթ այլոց, և կենաց նժարքն երբեք հաւասարակշիւ չեն կրնար ըլլալ, մահաւանդ թէ՛ կենաց նժարից հաւասարակշիւութեան ժամն է աշխարհիս յետախաղացութեան վճռաժամն:

Հ. Ս. ՍԱՐ.



ՃՈՆ ԲԱՐՍԵՂ

Պատուարժան խմբագիր Բաղմավէպ հում. դիւսարանի:

Քաղաքական հանդիսից սուրհասուցակը կը բերէ ձեզ դարաւոր խնդիր մի լուծել և բացատրել, և առ հասարակ քանակիւրաց և պատմագիտաց և այլ հետաքրքիր և ըմբօքեցաւոր ամծամց միտքը, կարծիքը և գաղափարը ուղղելու և մշտմշտաւոր կերպիւ կասկածը փարատելու համար: — 1. Բարսեղ վարդապետ ժողովուրդէն մէկ է թէ երկու: 2. Է դարձեալ ասկած մէկը, թէ ժողովուրդը: 3. Մարկոսի անտարաճի մեկնիչ, որոյ առաջին հատորը կորսուած է, և շարականաց որդիչ՝ որք ժողովուրդը կոչեցամ ասեմ, սոյն այս Բարսեղ վարդապետն է, թէ այլ ոք: Այս կէտերը լաւ պարզելու համար արժամ կը համարիմ հեղինակաց ոմանց աւանդած խօսքերը յառաջ բերել աստամօր ի դիւրութիւն վերծանողաց:

Հ. Միքայէլ Զամեան, պատմաբան կոչեցեալ, Բարսեղ վարդապետի մասին իւր պատմութեան մէջ գրէ այսպէս. «Յետ այսոյ կամ մոռնալովութեան և յետ արձակելոյ ժողովոյն, Ներսէս շինող կաթողիկոս յամծմ արար Բարսեղ վարդապետի, որ էր առաջնորդ Դպրեմանից յերկրին Շիրակայ, որոշումն առնել շարականաց, ըմտնելով զպիտանմի յամպիտանեաց. և մա արար այնպէս: Այս Բարսեղ վարդապետ երեւելի էր յայմժամ ի Հայս, և կոչիւր իբր մակամուսնի ժողով, որ և արար ըմտիւր գրուածս, ընդ որս և գլխնութիւն անտարաքանմի Մար-

կոտի: Իսկ այն շարակամք զորս ըմտրեաց մա, յսնուն մորա ժողովորդ կոչեցամ, որպէս զըն Վարդամ Պատմիչ, որ և յաւելու՝ թէ սա եօթն ամգամ ետես գօրիստոս սրանելի համարձակութեամբ: Յամի Տնառն 645, տնի Պատմ. Հայոց հատ. Բ. երես 347: Հ. Մ. մետեւած է Վարդամայ և Կիրակոսի պատմութիւնաց, առանց ուշ դնելու Բայրեզ վարդապետի իսկական յիշատակարանին, զոր յետոյ յառաջ պիտի բերեմք:

Հ. Գարբիէլ վարդապետ Աւետիքեան ի Բագատրութեան շարակամաց, ի կանոնի Վարդապետի, յերես 464, ասէ. «Այսպիսի իմ տեղեկութիւն արարեալ յաղագս տունի Վարդապետին, դարձուցուք զքանի ի կանոն առաջնոյ աւուրն, որոյ վասն արժանի յիշելոյ է պատմութիւն Վարդամայ, զի ասէ թէ ի մեծածորով տօմախմբութեան վարդապետին, զոր արար Ներսէս շինող կաթողիկոս, ութ հարցն յայտնեցան, (որով կամ զտոյր կանոնն իմանայ, և կամ զհարցն միայն իւր սարգքն)». և ի լինել հոկատարութեան՝ իւրարանջիւր զիւր կանելով երգել, կաթողիկոսն յանձն արար Բարսղի վարդապետի ծոն կոչեցելոյ, ընտրել յայնցանէ զոր պատշաճն դատի. և այլ է շարակամն որ այժմ պաշտի յեկեղեցի մեր, ասէ Վարդամ, որ և վասն այսր պատճառի կոչեցաւ՝ ասէ՝ ժողովորդ: Հ. Գարբիէլ եւս հետեւած է Վարդամ վարդապետի պատմութեան: Վարդամ վարդապետի պատմութիւնն ուրիշ հայ հեղինակաց պատմական գործոց հետ ի միասին, հարդերձ գաղտնական թարգմանութեամբ տպագրեալ է ի Բարիք արքունի ծախիւք՝ յամի 1884, ինչպէս կը տեսնուի աստ յերեսադէմ ի վան Օգոստինեան կրօնաւորաց:

Իսկ մեկնութիւն ներկորդ հատորի աւետարանին Մարկոսի, տպագրեալ ի Կոստաղուն պոլիս, և հասան վառա խան, յամի 1826, երկրորդ յառաջաբանութիւնն կը նկատուի վերջգետն հեղինակաց խօսքերուն, զիւրով այսպէս. «Սոյն այս երանելիս Բարսեղ վարդապետ՝ զողով մին ի հոգեկիր հարց յեթմնորդ դարու ծաղկեցաւ». տես ամբ: Անաւապիկ և յիշատակարան հեղինակին. «Շնորհօք և ողորմութեամբն Աստուծոյ հօր՝ սկիզբն արարի զդոյս, և ձեռնտութեամբն և օգնական լինելով Քրիստոսի Յիսուսի որդայն Աստուծոյ՝ ի գլուխ

համեալ կատարեցի եւ լուսնուն վարդապետս Բարսեղ՝ զմեկնութիւն սրոյ տնտարանին որ ըստ Մարկոսի, որպիս յաղորդեաց և զօրացոց՝ տալով մեզ զմիտս և զքանի Հոգին տուր Աստուծոն մշմարիտ. . . . Արդ եղև վնար այսր մեկնութեան ի թագաւորութեան Նետին որդւոյ Օշին մորենայ և զեռարայս մանկանն՝ յոյժ երկեղածի և աստուածասիրի, զորոյ զթագաւորութիւնն յաղագս տղայութեան իւրոյ խմանն և հոգան երեք մեծագոյն և փառաւոր յիշանքն, երկու եղբարքն հարազատ՝ պարոն Օշին և պարոն Կոստանդին, որք աստիճանաւ Աւագ պարոն և Գունդուստապ կոչին, և այլն: Եւ զրեցաւ աս ի վասն որ կոչի Մաշլու, ի հայրապետութեանն Տ. Կոստանդնայ կաթողիկոսի Դրազարկեցոյ, և յառաջնորդութեան սուրբ ուխտիս Տ. Հայրապետ Լպիսկոպոսի: Եւ ի գրութեանն է թիւն հայոց 947 (1325)», տարաբաղդ վերջին մունքին հարստութեան հոգեվարքի ատենները: Արդ ինչպէս կարելի է համաձայնեցնել է դարձ ԺԴ դարուն հետ. «Դր եմ Նե սէս՝ շինող և Կոստանդին Դրազարկեցին. միջոց կարի երկար: Իսկ Հ. Ղ. Ալիշան, գիտնական վարդապետն ուխտով Հեմետիկի՝ շարակամաց ընտրութիւնը և կարգաւորութիւնը տայ Գէորգ վարդապետի Սկեւռացոյ և Գրիգորի Խլի, որուն խօսքերը կը համառօտենք այստեղ: «Մոռանայ դրաւատին, կամ ոչ պարզապէս յիշէ զմիտս եւս յոյժ պիտանի հասարակաց գործ, որ և յստարար ստուգաւոր և չափազիտակ համնարոյ Գէորգայ. այն է ընտրութիւն և հաստատութիւն բանից և եղանակաց շարակամաց մերոց: Ծանօթ է քանակաւորաց, զի և ձեռագիր յիշատակարանս երգարանիս, անհետին ի սկզբամէ ԺԴ դարու ի յոլովն Օշանակի, զրեալ ըստ լաւ և ըմտիր կամ ստոյգ օրինակին՝ որ կոչի Խլեցի, և յոմանս վկայի զի ընտրոյն այն էր Գրիգոր, առաջին վարժապետ Սայ և քաջ քարտուղար մակեդոնական Խուլ. . . . և թէ մշմարտեալ քանք երգոցս Խլու օրինակն է ի վարդապետաց, զոր մեծ վարդապետն Գէորգ ուղղեաց. . . . զի արհեստն խառնեալ լիցի ի յերգսն, որպէս մոյն Խլոյն օրինակն է զոր սահմանեաց վարդապետն Գէորգ: Որպէս գուշակի՝ Խուլն զեղանակն մշգրտեաց, իսկ Գէորգ զքանսն և զեղանակսն, միաբան վաստակելով ընդ Գրիգորի թէ յետ մորա, չէ յայտ: Տես ի զիրս Սիսուանայ էջ

105-6 և 224: — Գտանք աստ ի գրատան մերում Խլի օրինակ մի ձեռագիր շարական, որոյ յիշատակարանմ է այս. « Գրեցաւ եղամակաւոր տառս ի թուականութեամ հսոյց ԳՅԵ (1426) ի հոլակաւոր և յամադիկ դղեակս Թմոր՝ ընդ հոլականեալ Ս. Աստուածածնիս... ի լաւ և յըմսիր օրինակէմ մեծ և քաղ քարտուղարի Սոյ Գրիգոր ղարի՝ մականուն Խոլ կոչեցելոյ ։ Սոյն օրինակիս վերայ քարտատմամբ կրկիմ ամգամ տպագրեցաւ ձայնաքաղ շարականն աստ ի վամս մեր ։

Ահաւստիկ ըստ կարի մերում՝ հեղինակաց այս մասին գրած խօսքերը հաւաքելով ամփոփեցար աստ. կը մնայ ընտրութիւնը և եզրակացութիւնը և ստոյգ որոշումը ձեռն տպատմամբ ։

ԱՍՏՈՒԱԾԱԾՈՐ ԵՎԻԿՈՒՄՅԱՆ
1898 Սեպտեմբեր 22 ՏԵՐ ԾՈՎԱԿԱՆՆԵՍԱՆՑ
ԵՆԵՐԱՊԵՏ

Գերազանդեալ Սրբազանիս այս հռչակածը մեր քոյ էր մի ժամանակէ ի վեր, զոր հրապարակելու համար յարմար առիթ կը սպասէինք։ Եւ այժմ զայն Բագմալիայի ընթերցողաց ներկայացնելու ժամանակ՝ Սրբազանիս հաւաքած վկայութեանց վերայ մեզ կը մնայ մեր կողմանէ յաւելուել երկու կարճ դիտողութիւն միայն՝ իբր եզրակացութիւն։

Ա. ձոն Բարսեղ է դարուն ծանուցուած, և Մարկոսի մեկնիչն Բարսեղ ժԳ դարուն, հարկ է որ զատ անձինք լինին։ Առաջինը չէ կարելի ի ժԳ դար բերել միացնել երկնութեան հետ. որովհետեւ Վարդան պատմիչ, որ կը խօսի ձոնի մասին, ապրած է ժԳ դարուն, մեկնչն յառաջ։ Եւ ոչ երկրորդը կրնամք տանել ձոնի հետ միացնել, ինչպէս վրեպակաւ կ'ընեն Հ. Չամչեան և Մարկոսի մեկնութեան յառաջ. բանողը. որովհետեւ այս Բարսեղ ապրէն իւր անձն և իւր մեկնութիւնը կը կապէ ժԳ դարուն հետ՝ ինքնագիր յիշատակարանին։

Բ. Խոլի Գրիգորի և Գէորգայ աշխատութիւնը շարականաց վերայ՝ պէտք չէ չլիթիլ ձոնի բրածին հետ։ Բարսեղը զատ Վարդանայ՝ շարականաց տեռակը և թիւը սահմանեց, զատելով պատշաճագոյնն այն բագմաթիւ շարականն. բէն՝ որ կային իւր ժամանակ. և այդ ընտրեալը կոչեցան ձոնընտիր։ Իսկ Գէորգ, սրանեաց Առաջին եպիսկոպոսի յիշատակարանին համեմատ՝ որ կը յիշուի Սեռուանի մէջ, միայն « ուղղեաց » շարականը. այս ինքն այնպէս ըրաւ. « զի արուեստն առագանութեան խառնեալ լիցի յերգն »։ Նոյնպէս էր և Գրիգորի աշխատութիւնը։ Եւ ահա այս գործը, կատարուած լիկ բառից և եղանակաց վերայ, բոլորովին տարբեր է յառաջնոյն։ Մեզ թուի՝ թէ նոյնպէս կը խորհէ Սեռուանի արգոյ հեղինակն. եւ ինչպէս ձոնի անձն չեմք կարող միացնել մեկնիչ Բարսեղի հետ, նոյնպէս և ոչ նորա (ձոնի) աշխատութիւնը Գէորգայ և Գրիգորի ըրածին հետ։

Եւ ահա այս գործը, կատարուած լիկ բառից և եղանակաց վերայ, բոլորովին տարբեր է յառաջնոյն։ Մեզ թուի՝ թէ նոյնպէս կը խորհէ Սեռուանի արգոյ հեղինակն. եւ ինչպէս ձոնի անձն չեմք կարող միացնել մեկնիչ Բարսեղի հետ, նոյնպէս և ոչ նորա (ձոնի) աշխատութիւնը Գէորգայ և Գրիգորի ըրածին հետ։



ԶԱՆՈՒԹՅՈՒՆ ԶԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԻՔԱԶԱՅ ԹԵՐԹԵՐ

ԲԻԻԶԱՆԴԻՈՆ. — Զգուշութիւն քարոզելու է մեր ամէն այն գեղարուեստիկ կամ փառատնիչիկ գրագէտ անձանց, որք առանց տաւալիս դպրոցական շարագրութեան անտպիր փորձեր կատարելու՝ հրապարակ կը նետուին։ Այո՛ թող գգուշանան այն հեղինակները կամ գրագէտները՝ որոնք անփորձ արդի անաշտ քննադատութեան՝ անմիակ երկերով կ'ուզեն ծառայութիւն մը մատուցանել հայ գրականութեան։ Այս գգուշութիւնը կը փողէ «Բիւզանդիոն» ի (թիւ 822) ռուսահայ թղթակիցը, իւր տեղացի գրական գործիչներու մասին։ Փննադատութեան մի միայն գրուածքի գրիչ կ'ընդունի հայ հասարակութեան ծանօթ Աղայեան, Պապեանցը, Նիւրուսեանցը, Մուրացան, Փափաքեան. ու կը պարտաւէ Լ. Մանուէրեան, Ա. Մատթեան, Դ. Իմմիւրեան, Ար. Միսիթարեան, Պ. Մոնոսեան, Յարութիւն Թումայեան, Ա. Ատէրեան, Ա. Ահարսեան և Արարիկ։ Փննադատութիւնը պարտք ունի խալ ու յանդուգն գրիչները քննադատական անկողնակալ գրչով պոռչացընել, ուղղել. բայց սակայն անշուշտ կը ներուի մեզ ըսելու, թէ «Բիւզանդիոն» ի այս թղթակցին քննադատականը՝ սաստիկ անաշտ կը գտնենք։ Նոյն թղթակցին հետ ընդհանուր հայ գիտուն գոտակարգը կը ճանչնալ իրեն գրուածած Հեղինակներու գովելի համբաւն, բայց պիտի չհանդուրժէ իրեն հետ պարսաւելու այն գրիչներն զորս ինքը կը պարսաւէ և կ'անտանէ։

«... որոյմեկի գրական հիւանդներ, որոց երես եմ տալիս թերթները»։